ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուդյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 8

«__23__»___հունվար___2024 թ.

# ՀԼԳ/բ -068-ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (Նորագույն-2) ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.6-Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6-Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ 4-րդ կուրս, 8-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝ Սուսաննա Թումանյան

Էլ. հասցե/ներ՝ susannatumanyan2020@mail.ru

Վանաձոր- 2024թ.

БОՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը  և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և  խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների  գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը,  ուսումնական աշխատանքի  տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական  քարտ
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    14.2. Հարցաշար
    14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագիր

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Հայ գրականության պատմություն (Նորագույն-2)» դասընթացը նախատեսված է «Հայոց լեզու և գրականության» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների համար: Դասընթացի լսարանային բեռնվածքը կազմում է շաբաթական 5,25 ժամ, որից 3-ը հատկացված է դասախոսությանը, 2,25-ը՝ գործնականին:

Դասընթացը ներկայացնում է նորագույն շրջանի գրականության առանձնահատկությունները, զարգացման փուլերը՝ պայմանավորված հասարակական, սոցիալական, մշակութային գործընթացներով (60-80-ականների փուլին նախորդող հետպատերազմյան շրջանն առանձին փուլ չի դիտարկվում. համարում ենք անցումային): Փուլի հարցերը դիտարկվում են նաև ռուս և արտասահմանյան գրականությունների զարգացման նույնական փուլի հետ կապերով:

Դասընթացը «Հայ գրականության պատմության» նախորդ շրջանների (զարգացման փուլերի) անմիջական շարունակությունն է, հենվում է այդ փուլերի ուսումնասիրությունից

«Գրականության ներածություն» «Գեղարվեստական երկի վերլուծություն» դասընթացներից ստացած գիտելիքների վրա, միաժամանակ օղակ է դառնում «Արդի հայ գրականություն» դասընթացի (20-րդ դարի 90-ական թվականներից առ այսօր) և հայ գրականության զարգացման մյուս փուլերի միջև:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նորագույն շրջանի հետպատերազմյան հայ գրականության զարգացման փուլայնության, առանձնահատկությունների, ներքին օրինաչափությունների, գրական հոսանքների, գրական սերունդների ստեղծած արժեքների, գրականունների, գրականության փիլիսոփայության, ինչպես նաև տեսական մտքի, հայացքի կրած փոփոխությունների հետ:

2.2. Հատուկ ուշադրություն է դարձվում 60-80-ականների փուլին նախորդած անցումային շրջանի գրականության զարգացման միտումներին:

2.3. Կարևորվում են փուլի ընթացքում ստեղծված գրականության պոետիկայի հարցերը:

2.4. Դասընթացի խնդիրներն են.

- Կարևորել 60-80-ականների դերը ընդհանրապես մշակույթի, մասնավորապես գրականության զարգացման գործընթացում:
- Ճանաչել գաղափարական կապանքները ջարդած, իրական իրապաշտական խնդիրներ առաջադրած, առողջ մտայնությամբ ստեղծված գրականության հիմնական գծերը:
- Վերհանել հատկապես հայ արձակի որակի նոր սահմանի նվաճումը:

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

Դասընթացի համար ակունքային են «Գրականության տեսություն», «Հայ գրականության պատմություն» («Հայ հին և միջնադարյան գրականություն», «Նոր գրականություն», «20-րդ դարի դարասկզբի գրականություն»), «Գեղարվեստական երկի վերլուծություն» դասընթացները: Ուսանողը պետք է իմանա նախորդ շրջանների գրականության զարգացման առանձնահատկությունները, գրական ուղղությունները, գրաքննադատական մեթոդները, տիրապետի վերլուծական մեթոդներին, կարողանա ինքնուրույն վերլուծել գրական երկը, կատարել ընդհանրացումներ և եզրահանգումներ, որոշել գրողի տեղը ժամանակի գրականության մեջ:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Հայ գրականության պատմություն (Նորագույն-2)» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. Իմանա՝
- Փուլի զարգացման էությունը,
- Գրողական հայացքի խորացման կարևորագույն առանձնահատկությունները,
- Գրական ժանրերի կրած փոփոխությունները:

2. Կարողանա՝
- Ինքնուրույն վերլուծել երկերը,
- Համադրել և ընդհանրացնել առանձին երկերի պոետիկայի խնդիրները, առանձնահատկությունները,
- Ճանաչել գրողի ինքնությունը, գրականության բերած նորը, ինքնատիպությունը,
- Կիրառել գրաքննադատական մեթոդները:

3. Տիրապետի՝
- Վերլուծական և համադրական մեթոդներին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,

<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

<u>ԳԿ8</u>տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),

<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,

<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,
ՀԳԿ3 սովորելու ունակություն,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,
ՀԳԿ11 որակի կարևորության գիտակցում:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
ԱԿ8 հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքերը:
ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

**5.** Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

Շրջանավարտը կունենա բավարար գիտելիք և կարողություն տարբեր մակարդակներում (ՈԱՇ-ի 4,5,6-րդ) դասավանդելու, մշակութային և լուսավորչական գործունեություն ծավալելու համար:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 5 կրեդիտ/150 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Դասախոսություն | 10 |
| Գործնական աշխատանք | 12 |
| Ինքնուրույն աշխատանք | 128 |
| Ընդամենը | 150 |
| Ստուգման ձևը | քննություն |

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել :

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- Դասախոսությունը դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- Ինքնուրույն աշխատանքը ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

  - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - <u>Էսսե</u> – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - <u>Զեկույց</u> – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

---

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

8. Դասավանդման մեթոդներներն են՝ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, բանավեճ-քննարկում, «Կլոր սեղան», պրոբլեմային-որոնողական և հետազոտական աշխատանք։

9. Ուսումնառության մեթոդներն են՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, կերպարների վերլուծություն։

**10.** Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| h/h | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | 20-րդ դարի 2-րդ կեսի հայ նոր գրականության հիմնական գծերը, զարգացման փուլերը, միտումները: | 0,5 | | | | 10 |
| 2. | Հրաչյա Քոչար, Խաչիկ Դաշտենց | 0,5 | | 1 | | 11 |
| 3. | Սերո Խանզադյան, Վարդգես Պետրոսյան | 1 | | 2 | | 11 |
| 4. | Մուշեղ Գալշոյան | 1 | | 1 | | 10 |
| 5. | Համո Սահյան, Պարույր Սևակ | 1 | | 1 | | 11 |
| 6. | Գևորգ Էմին, Վահագն Դավթյան | 0,5 | | 1 | | 11 |
| 7. | Սիլվա Կապուտիկյան,Մարո Մարգարյան | 0,5 | | 1 | | 11 |
| 8. | Աղասի Այվազյան | 1 | | 1 | | 10 |
| 9. | Հրաչյա Հովհաննիսյան, Ռազմիկ Դավոյան | 1 | | 1 | | 11 |
| 10. | Պերճ Զեյթունցյան | 1 | | 1 | | 10 |
| 11. | Հրանտ Մաթևոսյան | 1 | | 1 | | 11 |
| 12. | Զորայր Խալափյան | 1 | | 1 | | 11 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 10 | | 12 | | 128 |

[8] Նման է օրացուցային պլանին:

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| h/h | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Գեղարվեստական գրականություն | | |
| 1. | Հրաչյա Քոչար<br>1. Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը<br>2. Նահապետ<br>3. Մայրենի լեզու | |
| 2. | Խաչիկ Դաշտենց<br>1. Ֆայտոն Ալեքը<br>2. Խոդեդան<br>3. Ռանչպարների կանչը | |
| 3. | Սերո Խանզադյան<br>1. Հայրենապատում - լրացուցիչ<br>2. Հողը - լրացուցիչ<br>3. Խոսեք, Հայաստանի լեռներ- լրացուցիչ<br>4. Կորած արահետներ<br>5. Մերոնք ու մեր հարևանները<br>6. Վարք Հարանց<br>7. Մխիթար Սպարապետ<br>8. Թագուհին հայոց | |
| 4. | Վարդգես Պետրոսյան<br>1. Դեղատուն «Անի»<br>2. Ապրած և չապրած տարիներ<br>3. Մենավոր ընկուզենին<br>4. Վերջին ուսուցիչը<br>5. Հայկական էսքիզներ | |
| 5. | Մուշեղ Գալշոյան<br>1. Ծաղկած քարեր<br>2. Մարութա սարի ամպերը<br>3. Ձորի Միրոն<br>4. Բովտուն | |

| | | |
|---|---|---|
| | 5. Ագռավաքար- լրացուցիչ | |
| 6. | Համո Սահյան<br>1. Որոտանի եզերքին<br>2. Բարձրունքի վրա<br>3. Մայրամուտից առաջ<br>4. Քարափների երգը<br>5. Սեզամ բացվիր<br>6. Դաղձի ծաղիկ<br>7. Տարիներս - լրացուցիչ<br>8. Ինձ բացական չդնեք- լրացուցիչ | |
| 7. | Մարո Մարգարյան | |
| 8. | Հրաչյա Հովհաննիսյան | |
| 9. | Վահագն Դավթյան<br>1. Կապույտ գիրք<br>2. Անկեզ մորենի<br>3. Գինու երգը<br>4. Ծուխ ծխանի<br>5. Ասք սիրո և սրի<br>6. Ճերմակ ձիավորը<br>7. Թոնդրակեցիներ<br>8. Մանդու<br>9. Բանաստեղծի աստղը – լրացուցիչ<br>10. Գիշերային զրույց Նարեկացու հետ - լրացուցիչ<br>11. Ծիրանի ծառ – լրացուցիչ<br>12. Մոմիկ - լրացուցիչ | |
| 10. | Պարույր Սևակ<br>1. Նորից քեզ հետ<br>2. Մարդը ափի մեջ<br>3. Ուշացած իմ սեր | |

| | | |
|---|---|---|
| | 4. Անլռելի զանգակատուն<br>5. Եղիցի լույս<br>6. Երգ երգոց<br>7. Անհաշտ մտերմություն – լրացուցիչ<br>8. Միրո ճանապարհ – լրացուցիչ | |
| 11. | Սիլվա Կապուտիկյան<br>1. Գիրս մնա հիշատակող | |
| 12. | Գևորգ Էմին<br>1. Յոթ երգ Հայաստանի մասին | |
| 13. | Աղասի Այվազյան<br>1. Փառահամար<br>2. Դիպլիպիտո<br>3. Եռանկյունի<br>4. Եղած-չեղած մի կյանք - լրացուցիչ | |
| 14. | Ռազմիկ Դավոյան<br>1. Կեղևդ բաց արա<br>2. Պղնձե վարդ<br>3. Քարե բարձ- լրացուցիչ | |
| 15. | Պերճ Զեյթունցյան<br>1. Կլոդ Ռոբերտ Իզերլի<br>2. Արշակ Երկրորդ | |
| 16. | Հրանտ Մաթևոսյան<br>1. Օգոստոս<br>2. Ծառեր<br>3. Տերը<br>4. Ես ես եմ<br>5. Երկրի ջիղը – լրացուցիչ<br>6. Անձրևած ամպեր – լրացուցիչ<br>7. Մեր վազքը – լրացուցիչ | |
| 17. | Զորայր Խալափյան<br>1. Մեռնող-հառնող | |

| | | |
|---|---|---|
| | 2. Որտե՞ղ էին մարդ աստծո<br>3. Արա գեղեցիկ և Շամիրամ – լրացուցիչ | |
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Աթաբեկյան Ս.: Բառի կեցության խորհուրդը: էջը- Սահյան-94, Մաթևոսյան-135, Գալշոյան-224 | Երևան, 1988: |
| 2. | Աղաբաբյան Ս.: Անհատականության կոնցեպցիայի անկյունաքարը: | |
| 3. | Աղաբաբյան Ս.: Դասականներ և ժամանակակիցներ: | Երևան, 1986: |
| 4. | Աղաբաբյան Ս.: XX դարի հայ գրականության զուգահեռականներում: Հ.1,2 | Երևան, 1984: |
| 5. | Աղաբաբյան Ս.: Արդիականություն և գրականություն: էջը- Հովհաննիսյան 203,218, Խանզադյան-149, Սահյան-196,21, Էմին-3, Դավթյան-200,208,220 | Երևան, 1965: |
| 6. | Գասպարյան Դ.: Պարույր Սևակ: | Երևան, 2001: |
| 7. | Գասպարյան Դ.: Հելիկոնի աստղը: էջը-Մաթևոսյան-300, Այվազյան-338, Գալշոյան-328, Սևակ-253, Սահյան-287 | Երևան, 1988: |
| 8. | Սարինյան Ս.: Սերունդներ և ավանդներ: էջը- Խանզադյան-362, Դավոյան-185, Զեյթունցյան-205, Սևակ -128, 362 | Երևան, 1986: |
| 9. | Սարինյան Ս.: Գեղարվեստական գրականության պատմականությունը: էջը- Խալափյան- 256, Խանզադյան-286 | Երևան, 1979: |
| 10. | Սարինյան Ս.: Հայոց գրականության երկու դարը: Հ. 3: Էջը- Սևակ--251, Մաթևոսյան-317,514 | Երևան, 2002: |
| 11. | Սարինյան Ս.: Հայոց գրականության երկու դարը: Հ. 4: Էջը-Մաթևոսյան-560, Մահարի-584 | Երևան, 1984: |
| 12. | Պետրոսյան Թ.: Ս.Խանզադյանի պատմական ակնարկը: | Երևան, 1986: |
| 13. | Դանիելյան Կ.: Գրականություն և իրականություն: Էջը- Սևակ-4-192, Սահյան-138, Մաթևոսյան-199, Դավոյան-148 | Երևան, 1986: |
| 14. | Դեմիրճյան Պ.: Ժամանակը և գրականության զարգացումը: | Երևան, 1980: |
| 15. | Փանոսյան Ս.: Հ.Մաթևոսյանի ստեղծագործությունները: | Երևան, 1986: |
| 16. | Գրիգորյան Վ.: Հրանտ Մաթևոսյան: | Երևան, 1989: |
| 17. | Գասպարյան Դ.: Համո Սահյան: | Երևան, 2003: |
| 18. | Դավթյան Շ.: Հ.Սահյան. Բանաստեղծի հավատամքը: | Երևան, 2004: |
| 19. | Փանոսյան Ս.: Արդիական չափանիշներով: (Գալշոյան) | Երևան, 1988: |
| 20. | Եղիազարյան Ա.: Հայոց նորագույն գրականություն: էջ 312-ից (Սևակ, Մաթևոսյան, Այվազյան, Պետրոսյան) | Երևան, 2004: |
| 21. | Սարինյան Ս.: Միֆոլոգիզմը 20-րդ դարի 60-80-ական թթ հայոց արձակում: (Մաթևոսյան, | Երևան, 2012: |

| | | |
|---|---|---|
| | Դաշտենց, Պետրոսյան, Այվազյան, Խալափյան) | |
| 22. | Աղաբաբյան Ս.: Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր: Մահարի-240, Դավոյան-323, Դաշտենց-160, Մաթևոսյան – 252, 264, Սևակ- 272, Կապուտիկյան -279, Դավթյան- 292, Սահյան- 313, Խանզադյան - 352 | Երևան, 1982: |
| 23. | Արզումանյան Ս.: Սովետահայ վեպը: Հ.2: Խալափյան- 134, Դաշտենց - 190 | Երևան, 1980: |
| 24. | Արզումանյան Ս.: Արդի հայ վեպը: Հ.5: Խանզադյան -5, 241, Պետրոսյան – 188, Մաթևոսյան - 197, Խալափյան- 213 | Երևան, 2004: |
| 25. | Արզումանյան Ս.: Խորհրդահայ վեպը: Հ.4: Զեյթունցյան 401, Խալափյան – 62, Մաթևոսյան- 244, Պետրոսյան -328 | Երևան, 1990: |
| 26. | Չարխչյան Հ.: Սուլամիթա, Սևակի մեծ սերը: | Երևան, 2006: |
| 27. | Алексанян Е. В поисках героя и стиля. Դաշտենց-179, Մաթևոսյան -24, 72, 124, Գալշոյան-38,93, Պետրոսյան -49, Զեյթունցյան – 52, 140, Խալափյան – 60, | Ереван, 1984. |
| 28. | Փիլոյան Վ.: Ժամանակ և գրականություն: Մաթևոսյան -38,115 | Երևան, 2012: |
| 29. | Փիլոյան Վ.: Ժամանակի ձայները: Գալշոյան-31, Մաթևոսյան- 41-100 | Երևան, 2008: |
| 30. | Փիլոյան Վ.: Ակնարկներ արդի հայ գրականության: Խալափյան- 19, 51 | Երևան, 2018: |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Սահյան Հ.: Գրչի, խոսքի, խղճի կշիռը: | Երևան, 2003: |
| 2. | Սահյան Հ.: Բանաստեղծը, մտածողը, մարդը: | Երևան, 2004: |
| 3. | Ժամանակակից հայ արձակը: Հոդվ.հեղ.- Աղայան, Գրիգորյան, Գասպարյան, Աղաբաբյան: | Երևան, 1981: |
| 4. | Գրականությունը և ժամանակը: | ՀՍՍՀ, ԳԱ 1990: |
| 5. | Մաթևոսյանական արձագանքեր: Հ. 1, 2, 3: | 2005 |
| 6. | Քննադատական տարեգիրք: Գրիգորյան, Աղաբաբյան: | Երևան, 1986: |
| 7. | Սովետահայ գրականության պոետիկան: Հ.Մարգունի: | Երևան, 1980: |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | 20-րդ դարի 2-րդ կեսի հայ նոր գրականության առանձնահատկությունները: | 1. Փուլայնություն<br>2. 40-50-ական թթ որպես անցումային շրջան<br>3. 60-80-ական թվականներ<br>4. <<Մարդը ներսից>> սկզբունքը<br>5. <<Իդեալական հերոսին պատվանդանից իջեցնելու խնդիրը>><br>6. Ցցուն հերոսականությունից խուսափելու հարցը<br>7. Հերոս – անհատականություն - անձնավորություն շարժը | 0,5 | ՊԳ 4, 14, 20, 27<br>ԼԳ 3, 7 |
| 2. | Խաչիկ Դաշտենց | 1. Գրական ուղին (քնարերգությունից արձակ)<br>2. Թարգմանիչը, ակնարկագիրը<br>3. Բանահյուսական տարերքը, ասքայնությունը<br>4. Միֆոլոգիզմը<br>5. Հերոսների էպիկականացումը | 0,5 | ՊԳ 21, 22, 23, 27<br>ԼԳ 3 |
| 3. | Սերո Խանզադյան | 1. Գեղագիտական հայացքի խորացում<br>2. Գոյաբանության պրոբլեմատիկան<br>3. Կոնֆլիկտի ձևափոխումը<br>4. Պատմավիպասանությունը<br>5. Պատումի առանձնահատկությունները | 0,5 | ՊԳ 8, 9, 12, 22, 27,14<br>ԼԳ 4 |
| 4. | Վարդգես Պետրոսյան | 1. Հրապարախոսական ակնարկից գեղարվեստական գրականություն<br>2. Նոր սերնդի և նախորդների գեղարվեստական կոնֆլիկտը<br>3. Բնավորությունների կերտման խնդիրը<br>4. Խոստովանական արձակը | 0,5 | |
| 5. | Մուշեղ Գալշոյան | 1. Գրական ուղին (ակնարկագրից գրող)<br>2. Հոգեբանական և բարոյական խնդիրներ<br>3. Մարդու և ազգի ճակատագիրը<br>4. Մարդը և աշխարհը<br>5. Երկերի կառուցվածքային, ֆաբուլայի և սյուժեի որոշ հարցեր | 1 | ՊԳ 7, 19, 27, 1, 29, 14<br>ԼԳ 4 |
| 6. | Համո Սահյան | 1. Մարդաբանական և մարդագիտական խորացումները<br>2. Բաց լինելու ուժը | 1 | ՊԳ 7, 13 17 18, 22, 5, 1 |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3. Ցավի խորությունը<br>4. Պոեզիայի հագեցվածությունը մարդկային բովանդակությամբ | | ԼԳ 1, 2 |
| 7. | Պարույր Սևակ | 1. Թարգմանական գործերի մեջ բնագրի ոգու պահպանման պահանջ<br>2. Արվեստի կրած փոփոխությունները (հետպատերազմյանից 60-ական թվականներ)<br>3. Ոճի գեղագիտությունը<br>4. Շարքերը որպես խոսք-մենախոսություն<br>5. Սերը<br>6. Պատմության փիլիսոփայությունը | 1 | ՊԳ 6, 7, 8, 13, 22, 26, 5, 3 |
| 8. | Վահագն Դավթյան | 1. Գրական ուղին<br>2. Ժողովածուները<br>3. Դիցարանը, բանահյուսությունը և պոեմները<br>4. Էպիկ մտածողությունը<br>5. Ժանրային ինքնատիպության որոշ խնդիրներ | 1 | ՊԳ 5, 22, 3 |
| 9. | Աղասի Այվազյան | 1. Այվազյանի արձակի խոհափիլիսոփայական երակը<br>2. Մարդը և ցեղը<br>3. Թաղի հոգեբանությունը<br>4. Անհատը և միջավայրը<br>5. Ազգայինը վիպակներում<br>6. Ճանապարհի փիլիսոփայությունը | 1 | ՊԳ 4, 20, 21, 22, 27, 14 |
| 10. | Պերճ Զեյթունցյան | 1. 60-ականները և հոգեբանական սյուժեները<br>2. Իրականության փիլիսոփայնացումը<br>3. Անհատները և պատմությունը<br>4. <<Արշակ Երկրորդի>> կերպարային մտածողության առանձնահատկությունները<br>5. Ինտելեկտուալ արձակը | 1 | ՊԳ- 8, 27 |
| 11. | Հրանտ Մաթևոսյան | 1. Գրական-հրապարախոսական մուտքը<br>2. Կյանքի ամբողջական ընդգրկման պահանջը<br>3. Գեղ.մտածողության պատմականացումը<br>4. Ծմակուտ աշխարհի ստեղծումը<br>5. Կերպարային մտածողության փոփոխությունը<br>6. Տեսակի խնդիրը<br>7. Ժառանգորդման կարևորումը<br>8. Պատումի բազմաձայնությունը | 1 | ՊԳ 1, 7, 10, 11, 13, 14, 15, 16, 20, 24, 27, 28, 29, 4, 5<br><br>ԼԳ 1, 2, 3, 4 |
| 12. | Զորայր Խալափյան | 1. Կերպար-բնավորություն-անհատ շարժումը<br>2. Հոգեվերլուծությունը | 1 | ՊԳ 9, 21, 23, 25, 27, 14 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3. Միֆը և մարդը<br>4. Բանահյուսական նյութը<br>5. Ժամանակի շարժումը<br>6. Ժեստը, բանահյուսական նյութը | | ԼԳ 4 |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հրաչյա Քոչար | 1. Պատերազմական թեման<br>2. Ակնարկից գեղարվեստական գրականության անցումը. հրապարակախոսականի խնդիրը<br>3. Տարեգրությունը և փաստը<br>4. Եղեռնը և մարդու հոգեկան կառույցի փլուզումը<br>5. Մայրենի լեզվի և ազգայինի խնդիրները | 1 | Բանավոր հարցում | ՊԳ 23 |
| 2. | Խաչիկ Դաշտենց | 1. Թարգմանիչ գրողը<br>2. Բանաստեղծական մուտքը<br>3. Ասքայնությունը արձակում<br>4. Միֆոլոգիզմը վեպերում<br>5. Էպոսը և Դաշտենցի կերպարները | 1 | Բանավոր հարցում | |
| 3. | Սերո Խանզադյան | 1. Կենսական նյութի ընդգրկումը<br>2. Գեղագիտական հայացքի խորացումը<br>3. Գոյաբանական պրոբլեմատիկան<br>4. <<Հայրենապատումը>><br>5. Պատմափիլիսոփայությունը<br>6. Հոգեբանական արձակի նախնական դրսևորումները | 1 | Բանավոր հարցում | |

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պատմվածքներում | | | |
| 4. | Վարդգես Պետրոսյան | 1. Այսպես կոչված <<երիտասարդական արձակի >> խնդիրները<br>2. Ժամանակի պրոբլեմատիկան<br>3. Նոր հայացք հայկականությանը<br>4. Սերունդների խնդիրը<br>5. Հոգեբանական և մարդկային արժեքների փոփոխությունները | 1 | Բանավոր հարցում | |
| 5. | Մուշեղ Գալշոյան | 1. Ակնարկից գեղարվեստական արձակ<br>2. Երգիրը և երգրեցին<br>3. Ժամանակի խնդիրը<br>4. Կերպարների էպիզմը<br>5. Սոցիալական խնդիրները <<Բովտուն>> վեպում | 1 | Բանավոր հարցում | |
| 6. | Համո Սահյան | 1. Բնությունը և մարդը<br>2. Բնության գեղանկարը<br>3. Պոեզիայի մարդկային բովանդակությունը<br>4. Աշխարհազգացումը<br>5. Ցավը<br>6. Կենաց արմատները<br>7. Ապրումի բնականությունը | 1 | Բանավոր հարցում | |
| 7. | Պարույր Սևակ | 1. Սևակի գրականագիտական հայացքները<br>2. Մարդը և դարը<br>3. Մարդը և կյանքը<br>4. Մարդը և մարդկայնությունը<br>5. Պատմության սևակյան ընկալումը | 1 | Բանավոր հարցում | |
| 8. | Գևորգ Էմին | 1. Ժամանակի և դարի խնդիրները<br>2. Ջննողական տարերքը<br>3. Երևույթների ճանաչման մոտեցումները<br>4. Գրական ճանապարհի տատանումները | 1 | Բանավոր հարցում | ՊԳ 5 |
| 9. | Սիլվա Կապուտիկյան | 1. Հրապարակախոսությունը<br>2. Բանաստեղծական արվեստը | 1 | Բանավոր հարցում | ՊԳ 22,3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. Սերը, կինը<br>4. Ապրումի և մտքի խաչաձևումները | | | |
| 10. | Մարո Մարգարյան | 1. Քնարականության առանձնահատկությունները<br>2. Բացվելու, ներսից աշխարհին նայելու կարողությունը<br>3. Անկեղծությունը<br>4. Կանացի մարդկային ցավը | 0,5 | Բանավոր հարցում | ՊԳ 3 |
| 11. | Հրաչյա Հովհաննիսյան | 1. Գրական ճանապարհը<br>2. Գեղագիտական հայացքի փոփոխությունները և ժողովածուները<br>3. Կյանք-մարդ-մարդկայնություն | 0,5 | Բանավոր հարցում | |
| 12. | Ռազմիկ Դավոյան | 1. Տեղը փուլի բանաստեղծական տիրույթում<br>2. Աշխարհի և մարդու խնդիրները ժամանակում<br>3. Մտածումի խորքայնությունը | 1 | Բանավոր հարցում | ՊԳ 8, 13, 22, 4 |
| 13. | Պերճ Զեյթունցյան | 1. <<Արշակ Երկրորդ>> պատմավեպը<br>2. Մարդու գեղագիտական պրոբլեմը<<Արշակ Երկրորդ>> վեպում<br>3. Կերպարաստեղծման առանձնահատկությունները | 1 | Բանավոր հարցում | |

Ծանոթություն: Հանձնարարվող գրականությունը տե՛ս 12.1-ում:

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[11] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[12] |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հրաչյա Քոչարի գեղարվեստական արձակը | 1. Օզսեն Վասպուրի ճանապարհորդությունը<br>2. «Սպիտակ գիրք» ժողովածուն. լեզվի և ազգության, պատմության խնդիրները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 2. | Խաչիկ Դաշտենց | 1. «Ֆայտոն Ալեքը» պոեմը. մարդում դրաման<br>2. Ասքայնությունը Դաշտենցի երկերում | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 3. | Սերո Խանզադյանի պատմական արձակը։<br>1. «Թագուհին հայոց»<br>2. «Մխիթար Սպարապետ» | 1. «Թագուհին հայոց» վեպը, կերպարները<br>2. Հայրենասերների և դավաճանների կերպարները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 4. | Վարդգես Պետրոսյան | 1. Արձակի կառուցվածքային առանձնահատկությունները<br>2. Ժամանակի գաղափարախոսությունը և երիտասարդ մարդը | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 5. | Մուշեղ Գալշոյան | 1. «Ձորի Միրոն»<br>2. «Բովտուն» վեպը։ | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Համո Սահյան | 1. Գույնը Սահյանի քնարերգության մեջ<br>2. Խոհը Սահյանի քնարերգության մեջ<br>3. Սահյան մտածողը | Քարտեզագրում<br><br>Էսսե | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 7. | Պարույր Սևակ | 1. Մարդկային միջուկի որոնումը<br>2. Սևակ-Սուլամիթա | դիմանկար | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 8. | Գևորգ Էմին | 1. Գրական ուղին | էսսե | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 9. | Վահագն Դավթյան | 1. Դիցաբանականը «Հայաստան աշխարհ՝ Արա Գեղեցիկ» պոեմում<br>2. «Մանդու» երկը. ժանրային խնդիրները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 10. | Սիլվա Կապուտիկյան | 1. Ժողովածուները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 11. | Մարո Մարգարյան | 1. Ժողովածուները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 12. | Աղասի Այվազյան | 1. Հայի տեսակի խնդիրը վիպակներում | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 13. | Հրաչյան Հովհաննիսյան | 1. Ժողովածուները | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 14. | Ռազմիկ Դավոյան | | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 15. | Պերճ Զեյթունցյան | 1. Ինտելեկտուալ արձակը | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 17. | Հրանտ Մաթևոսյան | 1. «Խումհար» վեպի կառուցվածքային խնդիրները<br>2. Տիրոջ մոդելը «Տերը» երկում | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |
| 18. | Զորայի Խալափյան | «Մեռնող-հառնող» վեպի միֆոլոգիական շերտերը | ռեֆերատ | Կիսամյակի ավարտ | գրավոր | |

Ծանոթություն: 1. Հանձնարարվող գրականությունը տե՛ս 12.1-ում:
2.Յուրաքանչյուր ուսանող իր ընտրությամբ գրում է երկու աշխատանք

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | 10 ուսանողի համար |
| Այլ -գեղարվեստական և տեսական գրականություն | Գրադարանային ֆոնդում ՊԳ, ԼԳ գեղ. գրականության ցանկում նշված երկերի առկայություն |

[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ամփոփիչ ստուգում և գնահատում կիսամյակի ավարտին (քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ավարտին քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[14]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. 20-րդ դարի 2-րդ կեսի հայ արձակի ընդհանուր դիմագիծը:
2. 20-րդ դարի 2-րդ կեսի հայ քնարերգության ընդհանուր դիմագիծը:
3. Հր.Քոչարի <<Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը>> երկը:
4. Հր.Քոչարի <<Սպիտակ գիրքը>> ժողովածուում լեզվի և հայության խնդիրները:
5. Հր.Քոչարի <<Նահապետ>> երկը. անհատի խնդիրը:
6. Խ.Դաշտենցի <<Ֆայտոն Ալեքը>> պոեմը, մարդու դրաման:
7. Խ.Դաշտենցի <<Խոդեդան>> վեպը. կերպարաստեղծման արվեստը:
8. Ֆիդայական շարժումը Դաշտենցի երկերում:
9. Ասքայնությունը Դաշտենցի երկերում:
10. Ս.Խանզադյանի <<Մերոնք և մեր հարևանները>> շարքը. դիմանկարը և երգիծանքը շարքում:
11. Ազատագրական պայքարը և առաջնորդները <<Մխիթար սպարապետ>> վեպում:
12. Մարդկային հարաբերությունները <<Մխիթար սպարապետ>> վեպում:
13. Հոգեբանական բացահայտումները <<Այրված տունը>> պատմվածքում:
14. Պետականության խնդիրները <<Թագուհին Հայոց>> վեպում:
15. Հերոսների ներքին դրաման <<Թագուհին Հայոց>> վեպում:
16. Հայկական միասնական պետականության ստեղծման խնդիրները <<Թագուհին Հայոց>> վեպում:
17. Միաստվածության համար մղվող պայքարը <<Թագուհին Հայոց>> վեպում:
18. Մարի Լույսի և Նուարի կերպարները <<Թագուհին Հայոց>> վեպում:
19. Սիրո խնդիրները <<Թագուհին Հայոց>> վեպում:
20. Վ.Պետրոսյանի <<Ապրած և չապրած տարիներ>> երկը:
21. Վ.Պետրոսյանի <<Վերջին ուսուցիչը>> երկը:
22. Վ.Պետրոսյանի <<Դեղատուն Անի>> երկը. կառուցվածքային առանձնահատկությունները:
23. Վ.Պետրոսյանի <<Հայկական էսքիզներ>> երկը. հայը և աշխարհը:
24. Մ.Գալշոյանի <<Մարութա սարի ամպերը>> . էրգիրը և էրգրեցին:
25. Մ.Գալշոյանի <<Բովտուն>> վեպը. աշխատանքի և մարդու թեման վեպում:
26. Մ.Գալշոյանի <<Ձորի Միրոն>> երկը. մարդու և միջավայրի խնդիրները:
27. Մարդը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
28. Կինը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
29. Խոհը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
30. Սերը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
31. Բնապատկերը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
32. Գույնը Սահյանի ստեղծագործությունների մեջ:
33. Մարո Մարգարյան. սիրո, մայրության, հայրենիքի խնդիրները:
34. Մ.Մարգարյանի ստեղծագործությունների արվեստը:
35. Հր. Հովհաննիսյանի ստեղծագործությունները:
36. Մարդը և աշխարհը Հր. Հովհաննիսյանի ստեղծագործություններում:
37. Պատմական դեպքերի դավթյանական գնահատականը:
38. Վ.Դավթյանի <<Մանդու>> պոեմը: Միֆի խնդիրը:
39. Վ.Դավթյանի <<Մոմիկ>> պոեմը: Արվեստի և մարդու խնդիրը:

40. Պ.Սևակի սիրային պոեզիան:
41. Պ.Սևակի <<Մարդը ափի մեջ>> ժողովածուն:
42. Պ.Սևակի <<Եղիցի լույս>> ժողովածուն:
43. Պ.Սևակի հոդվածները (<<Հանուն և ընդդեմ ռեալիզմի հիմքերի>>, <<Ինչը-ը, ինչպես-ը և որպես-ը>>):
44. Պ.Սևակ <<Եռաձայն պատարագ>>:
45. Ս.Կապուտիկյան. <<Դեպի խորքը լեռան>> ժողովածուն:
46. Ս.Կապուտիկյան. <<Մտորումներ ճանապարհի կեսին>>:
47. Սերը Կապուտիկյանի պոեզիայում:
48. Գ.Էմին:Մուտքը: <<Նախաշավիղ>>:
49. Գ.Էմին <<Նորք>> ժողովածուն:
50. Գ.Էմին <<20-րդ դար>> ժողովածուն:
51. Գ.Էմին <<Յոթ երգ Հայաստանի մասին>> խոհագրությունը:
52. Աղասի Այվազյան. <<Եռանկյունի>> երկը:
53. Աղասի Այվազյան <<Աղի կոմսը>>. հայի տեսակը, ժառանգականության խնդիրները:
54. Աղասի Այվազյան <<Արմինուս>>. հայի տեսակը:
55. Ա.Այվազյանի պատմվածքների արվեստը:
56. Ռ.Դավոյան. ստեղծագործության ընդհանուր բնութագիր:
57. Ռ.Դավոյան. <<Կեղևդ բաց արա>>:
58. Ռ.Դավոյան. <<Պղնձե վարդ>>:
59. Պ.Զեյթունցյան. <<Կլոդ Ռոբեր Իզերլի>> վեպը:
60. Պ.Զեյթունցյան <<Արշակ Երկրորդ>>. պատմական անհատը և մարդը (Արշակ):
61. Մարդու գեղագիտական պրոբլեմը <<Արշակ Երկրորդ>> վեպում:
62. Արշակ և Գնել:
63. Արշակ և Ներսես:
64. Արշակ և Փառանձեմ:
65. Դրաստամատ և Արշակ:
66. Պ.Զեյթունցյան <<Վերջին արևագալը>> կենսագրական վեպը:
67. Հ.Մաթևոսյան <<Ահնիձոր>> ակնարկը, արձագանքը:
68. Հ.Մաթևոսյանի <<Մենք ենք, մեր սարերը>> վիպակը:
69. <<Բեռնաձիեր>> շարքի գաղափարական խնդիրները:
70. Տեսակի խնդիրը Մաթևոսյանի ստեղծագործություններում:
71. Ազգայինի խնդիրը <<Կենդանին և մեռյալը>> երկում:
72. Մաթևոսյանի <<Գոմեշը>>:
73. Ռուստոմ Սարգսյան. Մամիկոնյանի կերպարը:
74. Մաթևոսյանի <<Սպիտակ թղթի առջև>>, <<Ես ես եմ>> հոդվածները:
75. Զ.Խալափյանի ստեղծագործությունների ընդհանուր բնությագիրը:

75.1. Գնահատման չափանիշները[15].

- Տեսական գիտելիքները- 40:
- Գործնական աշխատանքները- 40:
- Ինքնուրույն աշխատանքը 20:

[15] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման:

Ծանոթություն

Քննությունը կազմակերպվում է բանավոր:

Հարցատոմսը կազմվում է 3 հարցից: Յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է 10, որտեղ 4 միավորը տրվում է երկի ընթերցվածության, 4 միավորը՝ տեսական նյութի իմացության և 2 միավորը՝ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու համար: 10 միավորից 5-ը տրվում է խոսքի շարադրանքի տրամաբանվածության, մաքրության, իսկ 5-ը՝ փաստարկելու և պնդելու կարողության համար:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 011401.00.6-Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6-Հայոց լեզու և գրականություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Հեռակա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/բ-068 ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (Նորագույն-2)</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">4-րդ տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">22</td><td>Դասախոսություն</td><td>10</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>12</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">128</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նորագույն շրջանի հետպատերազմյան հայ գրականության զարգացման փուլայնության, առանձնահատկությունների, ներքին օրինաչափությունների, գրական հոսանքների, գրական սերունդների ստեղծած արժեքների, գրականունների, գրականության փիլիսոփայության, ինչպես նաև տեսական մտքի, հայացքի կրած փոփոխությունների հետ:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>1. Իմանա՝<br>• Փուլի զարգացման էությունը,<br>• Գրողական հայացքի խորացման կարևորագույն առանձնահատկությունները,<br>• Գրական ժանրերի կրած փոփոխությունները:<br>2. Կարողանա՝<br>• Ինքնուրույն վերլուծել երկերը,<br>• Համադրել և ընդհանրացնել առանձին երկերի պոետիկայի խնդիրները, առանձնահատկությունները,<br>• Ճանաչել գրողի ինքնությունը, գրականության բերած նորը, ինքնատիպությունը,<br>• Կիրառել գրաքննադատական մեթոդները:<br>3. Տիրապետի՝</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Վերլուծական և համադրական մեթոդներին: |
| Դասընթացի բովանդակությունը | Թեմա 1- 20-րդ դարի 2-րդ կեսի հայ նոր գրականության հիմնական գծերը, զարգացման փուլերը, միտումները, Թեմա 2-Հրաչյա Քոչար, Թեմա-3 Խաչիկ Դաշտենց, Թեմա 4 - Սերո Խանզադյան, Թեմա 5-Վարդգես Պետրոսյան, Թեմա 6-Մուշեղ Գալշոյան, Թեմա 7 - Համո Սահյան, Թեմա 8- Պարույր Սևակ, Թեմա 9- Գևորգ Էմին, Թեմա 10-Վահագն Դավթյան, Թեմա 11- Սիլվա Կապուտիկյան, Թեմա 12-Մարո Մարգարյան, Թեմա13- Աղասի Այվազյան, Թեմա 14- Հրաչյա Հովհաննիսյան, Թեմա 15- Ռազմիկ Դավոյան, Թեմա 16 -Պերճ Զեյթունցյան, Թեմա 17- Հրանտ Մաթևոսյան, Թեմա 18-Զորայր Խալաֆյան: |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | Դասընթացն ամփոփվում է քննությամբ:<br>Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է բանավոր քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:<br>• Տեսական գիտելիքները- 40:<br>• Գործնական աշխատանքները- 40:<br>• Ինքնուրույն աշխատանքը 20:<br>Ծանոթություն<br>Քննությունը կազմակերպվում է բանավոր:<br>Հարցատոմսը կազմվում է 3 հարցից: Յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է 10, որտեղ 4 միավորը տրվում է երկի ընթերցվածության, 4 միավորը՝ տեսական նյութի իմացության և 2 միավորը՝ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու համար: 10 միավորից 5-ը տրվում է խոսքի շարադրանքի տրամաբանվածության, մաքրության, իսկ 5-ը՝ փաստարկելու և պնդելու կարողության համար: |
| Գրականություն | Պարտադիր- Աթաբեկյան Ա.: Բառի կեցության խորհուրդը: Աղաբաբյան Ս.: Անհատականության կոնցեպցիայի անկյունաքարը: Աղաբաբյան Ս.: Դասականներ և ժամանակակիցներ: Աղաբաբյան Ս.: XX դարի հայ գրականության զուգահեռականներում: Հ.1,2: Աղաբաբյան Ս.: Արդիականություն և գրականություն: Գասպարյան Դ.: Պարույր Սևակ: Գասպարյան Դ.: Հելիկոնի աստղը: Սարինյան Ս.: Սերունդներ և ավանդներ: Սարինյան Ս.: Գեղարվեստական գրականության պատմականությունը: Սարինյան Ս.: Հայոց |

| | |
|---|---|
| | գրականության երկու դարը: Հ. 3, 4: Պետրոսյան Թ.: Ս.Խանզադյանի պատմական ակնարկը: Դանիելյան Կ.: Գրականություն և իրականություն: Դեմիրճյան Պ.: Ժամանակը և գրականության զարգացումը: Փանոսյան Ս.: Հ.Մաթևոսյանի ստեղծագործությունները: Գրիգորյան Վ.: Հրանտ Մաթևոսյան: Գասպարյան Դ.: Համո Սահյան:Դավթյան Շ.: Հ.Սահյան. Բանաստեղծի հավատամքը:Փանոսյան Ս.: Արդիական չափանիշներով: (Գալշոյան) Եղիազարյան Ա.: Հայոց նորագույն գրականություն: Սարինյան Ս.: Միֆոլոգիզմը 20-րդ դարի 60-80-ական թթ հայոց արձակում: Աղաբաբյան Ս.: Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր: Արզումանյան Ս.: Սովետահայ վեպը: Հ.2: Արզումանյան Ս.: Արդի հայ վեպը: Հ.5: Արզումանյան Ս.: Խորհրդահայ վեպը: Հ.4: Չարխչյան Հ.: Սուլամիթա, Սևակի մեծ սերը: Алексанян Е. В поисках героя и стиля. Փիլոյան Վ.: Ժամանակ և գրականություն: Փիլոյան Վ.: Ժամանակի ձայները: Փիլոյան Վ.: Ակնարկներ արդի հայ գրականության:<br>Լրացուցիչ- Սահյան Հ.: Գրչի, խոսքի, խղճի կշիռը: Սահյան Հ.: Բանաստեղծը, մտածողը, մարդը: Ժամանակակից հայ արձակը: Հոդվ.հեղ.- Աղայան, Գրիգորյան, Գասպարյան, Աղաբաբյան: Գրականությունը և ժամանակը: Մաթևոսյանական արձագանքեր: Հ. 1,2,3: Քննադատական տարեգիրք: Գրիգորյան, Աղաբաբյան: Սովետահայ գրականության պոետիկան: Հ.Մարգունի: |